## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԻՄԻՏՐՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դիմիտրով համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դիմիտրով, (094)730000, dimitrov-gyuxapetaran@mail.ru

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 մայիսի 2021թվականի N 18

### ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 14-Ի N 6 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով, ավագանին որոշում է.

Հաստատել համայնքի ավագանու 2021 թվականի մայիսի 14-ի N 6 նիստի օրակարգը.

1. Համայնքի բյուջեի 2021 թվականի առաջին եռամսյակի կատարողականի մասին:

2. Համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերն օտարելու մասին:

3. Համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասը վարձակալության տալու մասին:

4. Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական տարեկան բյուջեով իրականացվող Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն համայնքներին ողղված սուբվենցիաների տրամադրման ծրագրին մասնակցելու մասին:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՀԵՆՐԻԿ

ԻՎԱՆՈՎԱ ԱԻԴԱ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ

ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԱՆ ԻՈՆԱՆՈՎ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԻՄԻՏՐՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դիմիտրով համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դիմիտրով, (094)730000, dimitrov-gyuxapetaran@mail.ru

## Ո Ր Ո Շ Ու Մ

14 մայիսի 2021թվականի N 19

## ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի 2021 թվականի առաջին եռամսյակի բյուջեի կատարողականի մասին հաղորդումը ` համայնքի ավագանին որոշում է.

Համայնքի ղեկավարի հաղորդումը 2021 թվականի առաջին եռամսյակի բյուջեի կատարողականի մասին ընդունել ի գիտություն:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՀԵՆՐԻԿ

ԻՎԱՆՈՎԱ ԱԻԴԱ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ

ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ` ԱՐՄԱՆ ԻՈՆԱՆՈՎ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
## ԴԻՄԻՏՐՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դիմիտրով համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դիմիտրով, (094)730000, dimitrov-gyuxapetaran@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 մայիսի 2021թվականի N 20

### ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ, 76-րդ, 77-րդ հոդվածներով, ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Դիմիտրով համայնքի սեփականություն հանդիսացող հետևյալ գյուղատնտեսական նշանակության հողամասը մրցութային կարգով տալ վարձակալության ՝
Ծածկագիր՝ 03-038-0121-0013, տարածքը՝ 0,2699 հա , հողատեսքը՝ 4-րդ կարգի ջրովի վարելահող, ժամկետը՝ 25 տարի, մեկնարկային վճարը՝ 3267 դրամ,
2. Գյուղատնտեսական նշանակության հողամասը վարձակալության տրամադրելու նպատակով ստեղծել մրցութային հանձնաժողով հետևյալ անհատական կազմով՝
հանձնաժողովի նախագահ՝ Արման Իոնանով-համայնքի ղեկավար(աճուրդավար),
հանձնաժողովի անդամներ՝ Թագուհի Արշակյան-համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար(արձանագրող),
Ռաաչ Յակուբով-համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ,
Էլյանորա Հովհաննիսյան-զարգացման ծրագրերի պատասխանատու,
Գայանե Մկրտչյան-ավագանու անդամ:
3. Համայնքի ղեկավար Արման Իոնանովին՝ կազմակերպել հողամասը վարձակալության տրամադրման մրցույթ՝ օրենքով սահմանված կարգով:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՀԵՆՐԻԿ
ԻՎԱՆՈՎԱ ԱԻԴԱ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ
ՂԱԶԱՐՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ
ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՅԱՆԵ
ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԱՆ ԻՈՆԱՆՈՎ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԻՄԻՏՐՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դիմիտրով համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դիմիտրով, (094)730000, dimitrov-gyuxapetaran@mail.ru

## ՈՐՈՇՈՒՄ

14 մայիսի 2021թվականի N 21

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ, 67-րդ, 68-րդ հոդվածներով, ,, Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Դիմիտրով համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հետևյալ հողամասերը օտարել դասական աճուրդով.

-03-038-0126-0011 կադաստրային ծածկագրով 0.16058 հեկտար մակերեսով 4-րդ կարգի գյուղատնտեսական նպատակային նշանակության (գործառնական նշանակությունը՝ վարելահող) հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 323970/երեք հարյուր քսաներեք հազար իննը հարյուր յոթանասուն/ ՀՀ դրամ ,

-03-038-0135-0011 կադաստրային ծածկագրով 0.10256 հեկտար մակերեսով 4-րդ կարգի գյուղատնտեսական նպատակային նշանակության (գործառնական նշանակությունը՝ վարելահող) հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 206195 /երկու հարյուր վեց հազար մեկ հարյուր իննսունհինգ/ ՀՀ դրամ,

-03-038-0975-0002 կադաստրային ծածկագրով 0.457 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության (գործառնական նշանակությունը՝ այլ) հողատեսք: Մեկնարկային գինը՝ 26278 /քսանվեց հազար երկու հարյուր յոթանասունութ/ ՀՀ դրամ,

-03-038-0015-0003 կադաստրային ծածկագրով 0.0688 հեկտար մակերեսով 4-րդ կարգի գյուղատնտեսական նպատակային նշանակության (գործառնական նշանակությունը՝ վարելահող) հողամաս: Մեկնարկային գինը՝ 138804 /մեկ հարյուր երեսունութ հազար ութ հարյուր չորս/ ՀՀ դրամ,

-03-038-0121-0003 կադաստրային ծածկագրով 0.11728 հեկտար մակերեսով 4-րդ կարգի գյուղատնտեսական նպատակային նշանակության (գործառնական նշանակությունը՝ վարելահող) հողամաս: Մեկնարկային գինը՝ 236612 /երկու հարյուր երեսունվեց հազար վեց հարյուր տասներկու/ ՀՀ դրամ,

-03-038-0136-0009 կադաստրային ծածկագրով 0.09927 հեկտար մակերեսով 4-րդ կարգի գյուղատնտեսական նպատակային նշանակության (գործառնական նշանակությունը՝ վարելահող) հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 200277/երկու հարյուր հազար երկու հարյուր յոթանասունյոթ/ ՀՀ դրամ,

-03-038-0123-0011 կադաստրային ծածկագրով 0.29159 հեկտար մակերեսով 4-րդ կարգի գյուղատնտեսական նպատակային նշանակության (գործառնական նշանակությունը՝ վարելահող) հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 588283 / հինգ հարյուր ութսունութ հազար երկու հարյուր ութսուներեք/ ՀՀ դրամ,

-03-038-0238-0004 կադաստրային ծածկագրով 0.1047 հեկտար մակերեսով 3-րդ կարգի գյուղատնտեսական նպատակային նշանակության (գործառնական նշանակությունը՝ վարելահող) հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 318812 /երեք հարյուր տասնութ հազար ութ հարյուր տասներկու/ ՀՀ դրամ:

2. Համայնքի ղեկավար Արման Իոնանովին՝ կազմակերպել հողամասերի օտարումը Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ և 68-րդ հոդվածների պահանջների համապատասխան:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՀԵՆՐԻԿ

ԻՎԱՆՈՎԱ ԱԻԴԱ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ

ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՀԱՍՄԻԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԱՆ ԻՈՆԱՆՈՎ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
# ԴԻՄԻՏՐՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դիմիտրով համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դիմիտրով, (094)730000, dimitrov-gyuxapetaran@mail.ru


## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 մայիսի 2021թվականի N 22

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ ՈՒՂՂՎԱԾ ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԾՐԱԳՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ, 42-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի N 1708-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով 2021 թվականի մարտի 2-ի հանրային լսումների արձանագրությունը համայնքի ավագանին որոշում է`

1. Նպատակահարմար համարել համայնքի մասնակցությունը Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն համայնքներին ուղղված 2021 թվականի պետական բյուջեից համայնքներին սուբվենցիաների տրամադրման ծրագրին:
2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16–ի N 1708–Ն որոշմամբ սահմանված կարգով Արարատի մարզպետարան ներկայացնել, Դիմիտրով համայնքի համայնքային գերեզմանոցի տարածքի վերակառուցման, Դիմիտրով համայնքի համայնքային փողոցների մասնակի հատվածների ասֆալտապատման, Դիմիտրով համայնքի համայնքային գրադարանի շենքի՝ որպես համայնքային հանդիսությունների սրահի վերակառուցման աշխատանքների ծրագրերի սուբվենցիայի ամբողջական փաթեթները:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՀԵՆՐԻԿ

ԻՎԱՆՈՎԱ ԱԻԴԱ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ

ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՀԱՍՄԻԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԱՆ ԻՈՆԱՆՈՎ**